Հավելված 1
ՀՀ փոխվարչապետի
N 423 - Ա որոշման

«ԳԹՈՒԹՅԱՆ ԽՈՀԱՆՈՑ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակով պայմանավորված, որն առավել վատթարացավ կորոնավիրուսի վարակի տարածմամբ և հետպատերազմյան ճգնաժամով՝ սույն ծրագրի իրականացումը կարևոր դեր կխաղա Երևան քաղաքում կարիքավոր ընտանիքների սոցիալական լարվածության թեթևացման խնդրում: Ծրագրի հիմնական նպատակներն են՝ • Նվազեցնել ծրագրում ընդգրկված շահառուների՝ Արցախից տեղահանված, սիրիահայ ներգաղթյալ և Երևան համայնքի հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով անձանց սոցիալական խոցելիությունը նրանց՝ օրական մեկ անգամ տաք, բարձր կալորիականությամբ սնունդ տրամադրելով: • Նպաստել նրանց հոգեբանական վիճակի բարելավմանը՝ ստեղծելով պայմաններ՝ միմյանց հետ շփվելու, հաղորդակցվելու և առօրյա հոգսերից մի փոքր կտրվելու համար: Սոցիալապես անապահով, տեղաշարժման դժվարություններ ունեցող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վիճակի թեթևացման նպատակով «Գթության խոհանոց» ծրագրի շրջանակներում գործում է նաև «Տնային խնամք» ենթածրագիրը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակն է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից՝ համաձայն Բարեգործության մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի:
3.	Բարեգործը	Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպություն, Գերմանիայի Օստալբի շրջան, «Գթության խոհանոց» Շվերիշ-Գմյունդ ընկերական շրջան (անհատ բարերարներ) և «Գթության խոհանոց» Երևանի ընկերական շրջան (անհատ բարերարներ)

4.	Ծրագիրը կատարողը	«Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դրոյի փ. 22/5, 0069, ՀՎՀՀ՝ 00903591
5.	Ծրագրի իրակա-նացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքում, բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	150,883,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Գթության խոհանոց» ծրագրի շահառուներն են Արցախից տեղահանված, սիրիահայ ներգաղթյալ և Երևանի Էրեբունի ու Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով անձինք: Ծրագրի շահառուներն ընտրվում են ըստ վերոնշյալ վարչական շրջանների կողմից ներկայացված ցուցակների, ինչպես նաև Արցախից տեղահանված և Երևան քաղաքում բնակվող անձանց շրջանում մեր կողմից անցկացված կարիքների գնահատման արդյունքում: «Տնային խնամք» ենթածրագրի շահառուներն են Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում ապրող սոցիալապես անապահով, տեղաշարժման դժվարություններ ունեցող տարեցներ և հաշմանդամություն ունեցող ընդհանուր առմամբ 68 անձ՝ հետագայում մինչև 100 ավելացման հնարավորությամբ, ովքեր Ծրագրում ընդգրկվում են վարչական շրջանի Սոցիալական աջակցության տարածքային բաժնի հետ համագործակցությամբ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի կմեկնարկի 2021 թ. ապրիլ 1-ին և կավարտվի 2025 դեկտեմբերի 30-ին:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում առաջին տարում 4 ամիս, իսկ հաջորդ տարիների ընթացքում տարեկան 6 ամիս (երկու եռամսյակ)՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, շուրջ 250 շահառու կստանա բարձր կալորիակա-նությամբ տաք սնունդ: Ընդհանուր առմամբ՝ Ծրագրի շրջանակներում կպատրաստվի և կբաշխվի շուրջ 154,000 ճաշաբաժին: Մեկ ճաշաբաժնի արժեքը կկազմի շուրջ 979.75 դրամ, իսկ ընդհանուր ծախսը՝ 150,883,000 դրամ, որն իր մեջ ներառում է ստորև բերվող միջոցառումների ինչպես նաև 10 և 11 կետերում նշված բոլոր ծախսերը: Ծրագրի շրջանակում շահառուների համար նախատեսվում է կազմակերպել սոցիալական և մշակութային միջոցառումներ, մասնավորապես՝

		Ծրագրի ամենամյա մեկնարկն ազդարարող տոնական միջոցառում (Կատարման ժամկետները՝ 2021, 2022, 2023, 2024 և 2025 թթ-ի հոկտեմբեր), անհրաժեշտ միջոցներ՝ յուրաքանչյուր տարի 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ): Ամանորի և Սուրբ Ծնունդյան տոնական միջոցառում (Կատարման ժամկետները՝ 2021, 2022, 2023, 2024 և 2025 թթ-ի դեկտեմբեր), անհրաժեշտ միջոցներ՝ յուրաքանչյուր տարի 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ): Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում (Կատարման ժամկետները՝ 2022, 2023,2024 և 2025 թթ-ի մարտ), անհրաժեշտ միջոցներ՝ յուրաքանչյուր տարի 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ): Սուրբ Զատկի տոնին նվիրված միջոցառում (Կատարման ժամկետները՝ 2021, 2022, 2023, 2024 և 2025 թթ-ի մարտ կամ ապրիլ), անհրաժեշտ միջոցներ՝ յուրաքանչյուր տարի 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ): Ծրագրի հերթական շրջանի ավարտի կապակցությամբ տոնական միջոցառում (Կատարման ժամկետները՝ 2021, 2022, 2023, 2024 և 2025 թթ-ի ապրիլ), անհրաժեշտ միջոցներ՝ յուրաքանչյուր տարի 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ): «Տնային խնամք» ենթածրագիրը շուրջտարյա է, և շահառուները բացի սոցիալ հոգեբանական աջակցությունից «Գթության խոհանոց» ծրագրի ողջ ընթացքում ստանում են տաք, կալորիականությամբ հարուստ ճաշ:

10.	Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մնդի գումար (հաշվարկված է միջինում 2,758,928 դրամ*28 ամիս (ամսական շուրջ 5500 ճաշարաժին)– 77,250,000 (յոթանասունյոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել շուրջ 50 անուն սնդամթերք: Կոմունալ ծախսեր (հաշվարկված է միջինում 250,000 դրամ * 57 ամիս) – 14,250,000 (տասնչորս միլիոն երկու հարյուր հազար) դրամ: Գույքի ձեռքբերում, շենքի, տարածքի և սարքավորումների սպասարկում ((սառնարաններ, սառցեխցիկներ, գազօջախներ և այլն) (հաշվարկված է միջինում 200,000 դրամ * 57 ամիս)) – 11,400,000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ: Աուդիտորական ծախս (հաշվարկված է միջինում 635,000 դրամ * 5 տարի) – 3,175,000 (երեք միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ: Տնտեսական պարագաներ (հաշվարկված է միջինում 60,000 դրամ * 57 ամիս) – 3,420,000 դրամ (երեք միլիոն չորս հարյուր քսան հազար) դրամ: Գրասենյակային պարագաների ձեռքբերում (հաշվարկված է միջինում 15,000 դրամ * 57 ամիս) – 855,000 (ութ հարյուր հիսունհինգ հազար) դրամ: Շարժամիջոցների պահպանման, սպասարկման և վառելիքի ծախսեր (հաշվարկված է միջինում 85,000 դրամ * 3 մեքենա * 57 ամիս) – 14,535,000 (տասնչորս միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար) դրամ: Հումանիտար բեռի ներմուծում – շուրջ 3,260,950 (երեք միլիոն երկու հարյուր վաթսուն հազար ինը հարյուր հիսուն) դրամ: Մեքենայի ներմուծում - շուրջ 3,739,050 (երեք միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար հիսուն) դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աշխատավարձ (հաշվարկված է միջինում 135,700 դրամ * 5 աշխատակից * 28 ամիս)- 18,998,000 (տասնութ միլիոն ինը հարյուր ինսունութ հազար) դրամ: Աուդիտորական ծախս (հաշվարկված է միջինում 635,000 դրամ * 5 տարի) – 3,175,000 (երեք միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ: Գրասենյակային պարագաների ձեռքբերում (հաշվարկված է միջինում 15,000 դրամ * 57 ամիս) – 855,000 (ութ հարյուր հիսունհինգ հազար) դրամ: Շարժամիջոցների պահպանման, սպասարկման և վառելիքի ծախսեր (հաշվարկված է միջինում 85,000 դրամ * 3 մեքենա * 57 ամիս) – 14,535,000 (տասնչորս միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար) դրամ:

		Մեքենայի ներմուծում - շուրջ 3,739,050 (երեք միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար հիսուն) դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի, Քանաքեռ-Զեյթուն և Էրեբունի վարչական շրջանների հետ համագործակցությամբ: Վերոնշյալ վարչական շրջանները սույն ծրագրի իրականացման համար ամեն տարի կտրամադրեն շահառուների ցուցակները: Իսկ Էրեբունի վարչական շրջանը կտրամադրի նաև ծրագրի պահանջներին համապատասխան արտագնա սպասարկման կետ, որտեղ կիրականացվի սննդի բաշխումը:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի շրջանակներում իրականացվելու է բազմաշերտ վերահսկողություն «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի կողմից: Ծրագիրը կլինի նաև Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի մշտադիտարկման ներքո, որին կներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ: Ծրագրի իրականացման ընթացքը կվերահսկվի Երևանի քաղաքապետարանի և վերոնշյալ վարչական շրջանների կողմից: Ծրագրի վերաբերյալ Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին կներկայացվեն տեղեկություններ՝ ՀՀ կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

18.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ